Հրաժարվել, կրճատել, վերօգտագործել, վերամշակել և վերականգնել

Կրթական նյութ

Ներածություն

Հրաժարվելը, կրճատելը, վերօգտագործելը, վերամշակելն ու վերականգնելը հայտնի են որպես թափոնների կառավարման «ամենակարևոր 5 քայլեր»:
5R (Refuse, reduce, reuse, recycle, restor)-ի նպատակն է նվազեցնել մեր կողմից օգտագործվող և դեն նետվող իրերի քանակը: Քանի որ Երկրի վրա տարածքը սահմանափակ է բոլոր թափոնները նետելու համար, կարևոր է արդյունավետ օգտագործել ռեսուրսները և առաջացնել հնարավորինս քիչ թափոններ: 5 քայլերը կարևոր դեր ունեն թափոնների կառավարման սխալ սովորությունների արդյունքում առաջացած խնդիրների լուծման հարցում:

5 քայլեր

Հրաժարվել
Հրաժարվե՛ք երբ և որտեղ հնարավոր է: Ընտրե՛ք իրեր, որոնք փաթեթավորված չեն պլաստիկով, ունեցե՛ք Ձեր սեփական պայուսակները, տարաները և սպասքը: Հրաժարվելը կնվազեցնի Ձեր կողմից առաջացող թափոնների/ աղբի մեծ մասը: Հարց տվեք՝ «Ինչո՞ւ ենք մենք ձեռք բերում այս ապրանքը» կամ «Ինչո՞ւ է մեզ այն պետք»: Օրինակ՝ սովորությո՛ւն դարձրեք «ոչ» ասել պլաստիկ ձողիկներին: Ամեն անգամ, երբ պատվիրում եք խմիչք, քաղաքավարի կերպով նշեք, որ մատուցողը չմոտեցնի պլաստիկ ձողիկ, քանի որ պլաստիկի այս տեսակը վերամշակելի չէ և վնասակար է շրջակա միջավայրին: Այսպիսով, ոչ անհրաժեշտ իրերից հրաժարվելը կնվազեցնի բնությանը հասցվող վնասը:

Կրճատել
Ինչ-որ բան քչացնելը կամ ավելի քիչ օգտագործելը կհանգեցնի ավելի քիչ քանակությամբ թափոնների առաջացմանը: Թափոնների կրճատումը պարզապես նշանակում է նվազեցնել այն իրերի քանակը, որոնք մենք օգտագործում ենք, և սպառել միայն այն, ինչն իսկապես անհրաժեշտ է: Այսպիսով, վերջնարդյունքում կրճատվում է նաև առաջացող և աղբավայրում հայտնվող թափոնների քանակը: Սա նաև նվազեցնում է ռեսուրսների սպառումը թե՛ թափոնների վերամշակման, թե՛ նոր ապրանքների ստացման տեսանկյունից: Ոչ պիտանի տարբեր իրերի գնման և օգտագործման նվազեցումը դրական է նաև գումար խնայելու տեսանկյունից: Օրինակ՝ մենք կարող ենք նվազեցնել շշալցված ջրի սպառումը և փոխարենը օգտագործել թերմոս՝ կրճատելով վերամշակման կամ աղբավայր ուղարկվող պլաստիկի քանակը:

Վերօգտագործել
Վերօգտագործումը ինչ-որ բան նորից օգտագործելու մեթոդ կամ պրակտիկա է: Ապրանքը կարող է վերօգտագործվել իր սկզբնական նպատակի համար օգտագործելուց հետո կամ այլ գործառույթ կատարելու համար: Ապրանքը մեկից ավելի անգամ օգտագործելը օգտակար է ոչ միայն մեր, այլ նաև շրջակա միջավայրի համար: Վերօգտագործումը օգնում է խնայել ժամանակ, գումար, էներգիա և ռեսուրսներ: Օրինակ՝ տանը խոհանոցում ապակե տարաներ կան, որոնք դատարկվելուց հետո կարելի է օգտագործել բազմակի անգամներ: Հին գրքերը կարող են օգտագործել այլ մարդիկ: Գիրքը կարող է օգտագործվել ընթերցանության համար կամ գրքի թուղթը կարող է օգտագործվել նշումներ անելու համար ևս: Թղթերը պատռելուց և դեն նետելուց խուսափելու համար օգտագործե՛ք նվերների կտորե փաթեթավորումներ: Փաթեթավորման թուղթը զգուշորեն հեռացնելուց հետո, այն կարող է օգտագործվել ևս մեկ անգամ:

Վերամշակել
Վերամշակումը թափոնների կառավարման համակարգի հիմնական բաղադրիչներից մեկն է: Այն թափոնները նոր նյութերի և առարկաների վերածելու, իրերի վերամշակման և վերօգտագործման գործընթաց է, որոնք հակառակ դեպքում հնարավոր է թափոնի վերածվեին: Այս գործընթացը խնայում է շատ ժամանակ, էներգիա, ռեսուրսներ և գումար, նվազեցնում է իրերի արտադրության համար օգտագործվող բնական հումքի սպառումը: Այսպիսով, շրջակա միջավայրի վրա ճնշումը նվազեցնելու համար կարևոր է գնել վերամշակված, ինչպես նաև վերամշակվող ապրանքներ: Օրինակ՝ Ձեր հին նոթատետրերը կարող են վերամշակվել, այնուհետև նորից օգտագործվել:

Ստորև նշված են այն ապրանքները, որոնք կարելի է վերամշակել.
• Ալյումինե տարա,
• Ստվարաթուղթ,
• Ապակի (մասնավորապես շշեր և տարաներ),
• Ամսագրեր,
• Մետաղ,
• Թերթեր,
• Թուղթ,
• Պլաստիկ տոպրակներ,
• Պլաստիկ շշեր,
• Պողպատե տարաներ,
• Անվադողեր,
• Գրված/ պատճենահանված թղթեր:

Վերականգնել
Այսօր նոր ապրանք գնելը ավելի հեշտ և նախընտրելի է շատերի համար, քան եղած ապրանքը վերանորոգելը և վերօգտագործելը: Սա վերաբերում է հատկապես էլեկտրական ապրանքներին, ինչպիսիք են՝ բջջային հեռախոսները և կենցաղային տեխնիկան, որոնք կարող են երկար ծառայել, եթե անհրաժեշտության դեպքում վերանորոգվեն: Կրճատումը, վերօգտագործումն ու վերամշակումը նվազեցնում են ինչպես բնական ռեսուրսների պահանջարկը, այնպես էլ դրանց սպառման տեմպերը: Արդյունքում ավելի քիչ ռեսուրսներ են օգտագործվում, և սահմանափակ ռեսուրսները պահպանվում են: Բացի այդ, ավելի քիչ թափոններ են առաջանում՝ դրանով իսկ նվազեցնելով աղբաման նետվող կամ այրման ենթակա աղբի քանակը: Քանի որ աղբավայրում հայտնված կամ այրված աղբի քանակը նվազում է, նույնքան էլ նվազում է ջրի և օդի աղտոտման հավանականությունը, որը կարող է առաջանալ թափոնների այրման կամ ոչ պատշաճ հեռացման արդյունքում: Երկիր մոլորակն ունի բնական ռեսուրսների սահմանափակ պաշար՝ ներառյալ աղբավայրերի համար օգտագործվող հողերը:

5 քայլերի կարևորությունը
Թափոնները ներկայումս մեծ մարտահրավեր են դարձել շրջակա միջավայրի և մարդկանց համար, քանի որ դրանց հասցրած վնասը վերաբերում է ողջ շրջակա միջավայրին: Կարևոր է հրաժարվելուն, կրճատելուն, վերօգտագործելուն և վերամշակմանն ուղղված քայլեր ձեռնարկել հենց երիտասարդ տարիքում՝ տարանջատելով մեզ իսկապես անհրաժեշտ ապրանքները պարզապես նախընտրելիներից: